

Խմբագրական Շինծու դատարաններէն անդին. «Իրաւական պատերազմի» նշանակութիւնը

Անցնող շաբթուան ընթացքին, Պաքուի բանտերուն մէջ ապօրինաբար պահուող հայ պատանդներու եւ ռազմաքաղաքական ղեկավարութեան հարցը վերստին յայտնուեցաւ իրաւաքաղաքական զարգացումներու կիզակէտին: Պաշտօնապէս յայտարարուեցաւ, որ Ռուբէն Վարդանեանի դատը վերջապէս պիտի ներկայացուի Մարզկային Իրաւանց Եւրոպական Դատարանին (ՄԻԵԴ), իսկ Դաւիթ Իշխանեան բանտախուցէն յղած իր ուղերձով յստակօրէն շեշտեց, որ իրենք հետեւողականօրէն կը սպառեն Ատրպէյճանի ներքին իրաւական բոլոր ընթացակարգերը: Անոնք քաջ կը գիտակցին, որ թշնամի երկրին մէջ արդարութիւն կամ արդարադատութիւն գոյութիւն չունի, սակայն այս ձեւական հոլովոյթին ենթարկուելը պարզապէս անհրաժեշտ նախապայման է եւրոպական բարձրագոյն ատենաներուն դիմելու եւ դատական լիարժէք գործընթաց սկսելու համար:

Շատերու համար այս կացութիւնը կրնայ անյոյս եւ յուսահատական թուիլ՝ յատկապէս նկատի ունենալով Ատրպէյճանի մէջ բարոյականութեան եւ արդարութեան ի սպառ բացակայութիւնը: Այս յուսաբեկութիւնը շատ աւելի կը խորանայ՝ տեսնելով Հայաստանի օրուան իշխանութիւններուն յանցաւոր լուծիւնն ու բացայայտ անտարբերութիւնը: Գործ ունինք վարչակարգի մը հետ, որ փաստօրէն շատ աւելի գոհ է այս ազգային հերոսներուն ու պետական գործիչներուն մեկուսացումէն, քան շահագրգռուած՝ անոնց անյապաղ ազատագրումով:

Սակայն, եւրոպայի մէջ բողոքարկման այս գործընթացը լոկ իրաւաբանական ընթացակարգային քայլ չէ, այլեւ՝ կարեւոր ու կենսական քաղաքական լծակ: Այս գործընթացի կարեւորութիւնը պէտք է դիտարկել աշխարհաքաղաքական դիտանկիւնէ: Ատրպէյճանը յստակօրէն կը կիրարկէ «պատանդառութեան դիւանագիտութիւն»՝ մեր գործիչները որպէս ճնշման լծակ եւ սակարկութեան առարկայ օգտագործելու համար: Մինչ Հայաստանի իշխանութիւնները, առաջնորդուելով պարտուողական պատրանքներով, կը խուսափին որեւէ կոշտ հակաքայլ եւ հարցը կը մղեն լուսանցք, եւրոպական հարթակի վրայ այս դատավարութիւնները կը վերածուին իւրաքանչիւր «իրաւական պատերազմի» (lawfare): Եւրոպական բարձրագոյն ատենաներու վճիռները բարոյական դատապարտումներէ շատ աւելին են. անոնք կը փաստագրեն Ատրպէյճանի պետական յանցագործութիւնները եւ վերջ կու տան անոր դիւանագիտական խուսանաւումներուն: Աւելին, անոնք Արեւմուտքի որոշում կայացնողներուն ձեռքին մէջ կը դնեն յստակ իրաւական հիմքեր՝ Պաքուի վրայ թիրախային ճնշումներ բանեցնելու համար՝ զրկելով միջազգային հանրութիւնը հարցը զուտ որպէս «երկկողմանի քաղաքական վէճ» ներկայացնելու պատրուակէն:

Ծիշդ այստեղ է, որ Հայկական Իրաւական կեդրոնի (ALC) եւ ՀՅԴ Հայ Դատի համաշխարհային ցանցի աշխատանքը կը ստանայ վճռորոշ նշանակութիւն: Անոնք պարտադրուած են լեցնելու հայկական պետականութեան ձգած վտանգաւոր բացը՝ մեր ազգային բարոյական ցասումը վերածելով շօշափելի քաղաքական լծակի:

Այս ուղղութեամբ տարուող աշխատանքներուն աջակցիլը սոսկ համակրանքի դրսեւորում չէ, այլեւ՝ դիտակից ներդրում համակարգուած ռազմավարութեան մը մէջ: Անիկա միակ գործնական ճանապարհն է չեզոքացնելու Պաքուի շանթաբ, մերկացնելու Հայաստանի իշխանութիւններու քաղաքական անանկութիւնը եւ ստեղծելու այն իրական դիւանագիտական պաշարումը, որ պիտի յանգեցնէ մեր գերեզմաններու ղեկավարներու եւ հայրենակիցներու արդար ազատագրման:

ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յունիսի 7-ին, Հայաստանի մէջ տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւնները մեր նորօրեայ պատմութեան մէջ կը մնան իբրեւ աննախընթաց պետական տեւորի պայմաններու մէջ տեղի ունեցած ընտրութիւններ:

Իշխող վարչախումբը ընտրական գործընթացի ամբողջ ընթացքին գործեց առանց միջոցների մէջ խտրութիւն դնելու: Հայնօրէն կիրարկուեցան ամբողջ վարչական միջոցները՝ պետական եւ համայնքային լծակներու օգտագործումով: Գործի դրուած քարոզչական, վարչական ամբողջ զինանոցը միտուած էր ամէն ձեւով սահմանափակելու քաղաքական մրցակցութիւնը ու ազդելու ընտրողներու ազատ կամքի արտայայտութեան վրայ: Իշխանութեան տարածած ատելութեան խօսքն ու ձեռնարկած քայլերը նոր բաժանարար գիծեր եւ պառակտումներ առաջ բերին հասարակութեան մէջ:



Յայտ. ... Ծար. Կարդալ էջ 4

Թորոնթոնիայութեան նորահաստատ կառույցը անուանակոչուեցաւ «Նարեկ հայ կրթական եւ մշակութային կեդրոն»



Կարդալ էջ 6

Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները հանդիպեցան նախարար Մելանի Ժոյի հետ



Կարդալ էջ 3



Dre Tamar Stambouliau
Dentiste généraliste
514 337-0007
info@espace32.ca

2663 RUE DE SALABERRY
MONTREAL, QC H3M 1L1

Espace32.ca





Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Զարեանի յոբելեանական ամեակներուն նուիրուած «Սրբազան համերգ»



Ուրբաթ, 10 յուլիս 2026–ի երեկոյեան, նախաձեռնութեամբ Գանատայի Հայոց Թեմի Կրօնական ժողովին եւ Ազգային վարչութեան, հովանաւորութեամբ տէր եւ տիկին Ժիրայր եւ Հուրի Զաքարեաններուն, Մոնթրէալի Vanier College–ի սրահին մէջ «Սրբազան Համերգ»–ով հանդիսաւորապէս նշուեցան Գերաշնորհ Տ. Բարգէն Արք. Զարեանի Քահանայական Զեռնադրութեան եւ Օծման 42–րդ, Եպիսկոպոսական Զեռնադրութեան եւ Օծման 20–րդ, ինչպէս նաեւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդութեան 10–րդ ամեակները։

Յօրեկեանական այս համերգին ներկայ էին Ռումանիոյ Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Տ. Իան Եպիսկոպոս Գասիանը, Մոնթրէալի Անկլիքան Եկեղեցւոյ Առաջնորդ Դոկտ. Վիգթոր Տաւիտ Մպուլի Պիփունկուն, Վերապատուելի Մհեր Նաչիկեանը, Թեմիս հոգեւոր հայրերը, «Սրբազան Համերգ»–ի հովանաւորները, Chomedey շրջանի երեսփոխան Սոնա Լախոյեան–Օլիվիէն, Լաւալի քաղաքապետարանի անդամ՝ Տիկին Սեղա Թօփուզեանը, ՀՅԴ Բիւրոյի անդամ՝ տիար Ռաֆֆի Տօնապետեանը, Մեծի Տանն Կիլիկիոյ Ազգային Կեդրոնական վարչութեան անդամ բժիշկ Ժիրայր Պասաճեանը, Ազգային վարչութեան ատենապետ տիկին Շովիկ Թերզեանը, Ազգային վարչութեան անդամները, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական գոմիտէի ներկայացուցիչ տիար Նորէն Տիմիթեանը, ազգային եւ եկեղեցական կառոյցներու ներկայացուցիչները, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Գանատայի Հայոց Թեմի չքանչանակիրները, բարերարները, ազգայիններ եւ հաւատացեալ ժողովուրդը։

Համերգը սկիզբ առաւ «Սրբազան Համերգ»–ի Կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ Օրիորդ Նուշիկ Էլոյեանի բացման խօսքով։ Իր խօսքին մէջ Օրիորդ Էլոյեան ըսաւ. «Այս ուրախ առիթը կը տօնենք մեր սիրոյ արտայայտութեամբ ընդ ձեզ՝ ոչ միայն խօսքով, այլ մանաւանդ հոգեւոր միասնութեամբ, մեր ազգային եկեղեցւոյ հարուստ ժառանգութեան ընդմէջէն։ Այս երեկոյեան հոգեւոր համերգը ձեզի կը նուիրեն ձեր հոգեւոր եղբայրները՝ Սուրբ Յակոբ եւ Սուրբ Գէորգ եկեղեցիներու դպրաց դասերն ու արական երգչախումբը, որոնց հետ լուռ կերպով կը միանան «Եկեղեցին Հայկազան» ամուր պահող մեր համայնքի գաւակներն ու բարեկամները։ Սրբազան Հայր, ձեզի կը մաղթենք արեւելատ օրեր եւ աննկուն կամք, որպէսզի շարունակէք ձեր նուիրեալ ծառայութիւնը եւ առաջնորդէք մեզ դէպի նոր յաղթանակներ՝ անխախտ պահելով մեր եկեղեցին, ամրապնդելով մեր կրթական օճախները եւ առաւել աշխուժացնելով հայապահպանութեան ծառայող մեր կազմակերպութիւնները»։

Բացման խօսքէն ետք, բեմ բարձրացան Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Դպրաց Դասն ու Արական երգչախումբը, ինչպէս նաեւ Լաւալի Սուրբ Գէորգ Եկեղեցւոյ «Շողակաթ» Դպրաց դասը, որոնք իրենց հոգեպարար երգեցողութեամբ հանդիսաւոր մթնոլորտ ստեղծեցին։ Ապա, ուղերձով հանդէս եկաւ Ազգային վարչութեան անդամ տիար Համբիկ Գարայեանը, որ չեչուեց. «Իր հովուական առաքելութեան բոլոր հանգրուաններուն Բարգէն Արքեպիսկոպոս իր աննկուն կամքով, հեռատեսութեամբ եւ ներշնչող առաջնորդութեամբ գրաւած է բոլորին ուշադրութիւնը։ 2016 թուականին, երբ ստանձնեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդի պատասխանատուութիւնը, ամբողջական նուիրումով լծուեցաւ Թեմի հոգեւոր, վարչական եւ համայնքային կեանքի զօրացման աշխատանքին։ Տասը տարիներու ընթացքին ան դարձաւ յոյս ներշնչող հովիւ մը, որ իմաստութեամբ եւ վճռակամութեամբ առաջնորդեց համայնքը՝ դիմադրաւելով բազմաթիւ մարտահրաւէրներ եւ նոր հորիզոններ բանալով ապագային համար»։

Ուղերձէն ետք բեմ բարձրացան Գերապատիւ Տ. Գարեգին Մ. Վրդ. Շիրտմեանը, Արժանապատիւ Տ. Նշան Բհն. Մանուկեանը եւ Բարեշնորհ Գէորգ Սրկ. Գատէհճեանը, որոնք ներկայացուցին ութ շարականներ եւ հոգեւոր երգեր՝ Մայէսթրօ Արմէն Ամիրխանեանի երաժշտական արդիական մշակումով։ Հոգեւոր երգեցողութիւնը խորապէս ազդեց ներկաներուն վրայ՝ վերածելով երեկոյն աղօթքի, խորհրդածութեան եւ հոգեւոր վերանորոգութեան գեղեցիկ առիթի։

Ապա, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Հոգաբարձութեան Ատենապետ տիար Սարօ Տէր Պետրոսեանը եւ Լաւալի Սուրբ Գէորգ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենապետ տիար Զաւէն Տէր Սահակեանը, Թեմիս եկեղեցական երկու համայնքներուն անունով, յուշանուէր մը յանձնեցին Առաջնորդ Սրբազան Հօր՝ ի նշան սիրոյ, երախտագիտութեան եւ գնահատանքի՝ անոր յոբելեանական ամեակներուն առիթով։

Աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը փոխանցեց իր սրտի խօսքը։ Իր խօսքին մէջ ան ըսաւ. «Այս պահուն սիրտս խոր յուզումով եւ երախտագիտութեան զգացումներով կը լեցուի, երբ կը նշուին իմ ծառայական կեանքի տարբեր հանգրուաններու ամեակները։ Նախ եւ առաջ փառք եւ գոհութիւն կը վերառաքեմ առ Ամենակալ եւ Ամենաբարի Աստուած, որ Իր անսահման ողորմութեամբ կանչեց ու առաքեց զիս, զօրացուց ինձի եւ արժանի դարձուց ծառայելու Իր Սուրբ Եկեղեցւոյ եւ սիրեցեալ մեր ժողովուրդին։ Ամեակները պարզապէս թիւեր չեն. անոնք ծառայական կեանքի հանգրուաններ են, արժեւորման առիթներ են, միաժամանակ նաեւ կամքերը պրկելու եւ նոյն հաւատքով ու սիրով ծառայութիւնը շարունակելու կոչ՝ հաւատարիմ մնալով Աստուծոյ, շարունակելով մեր հայրերուն ուղին, պաշտպանելով մեր ժողովուրդի արդար իրաւունքները եւ պահպանելով մեր ինքնութիւնը անաղարտ պահող արժէքները՝ յանուն գալիք սերունդներուն։ Այս ամեակները ինձի համար նաեւ ուխտի վերանորոգման առիթ են։ Այս պահուն դարձեալ կը նորոգեմ իմ ուխտը՝ շարունակելու ծառայել Աստուծոյ, Հայ Եկեղեցւոյ եւ մեր սիրելի ժողովուրդին՝ նոյն հաւատքով, նոյն սիրով, նոյն պատրաստակամութեամբ եւ նոյն յանձնառութեամբ»։

Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» մաղթերգի միահամուռ երգեցողութեամբ եզրափակուեցաւ յոբելեանական այս հանդիսութիւնը։

Այս առիթով, մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք Կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն եւ մեր բոլոր կամաւորներուն, որոնք անձնուէր ծառայութեամբ նպաստեցին յոբելեանական այս հանդիսութեան փայլուն յաջողութեան։

ԴԻԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Գանատայի սկաուտները կը պատրաստուին համա-ՀՄԸՄ-ական 13-րդ բանակումին

Սկաուտական ծրագիրներուն եւ գործունէութիւններուն մէջ մեծ խանդավառութիւն ստեղծած են բանակումները, ի մասնաւորի՝ Համա-ՀՄԸՄ-ական բանակումները։

Չորս տարին անդամ մը, հայրենիքի մէջ՝ Արագածի լանջին, Բիւրականի շրջանը, «Գառնիկ Մկրտիչեան» բանակավայրէն ներս, տասը օրերու ընթացքին, աշխարհի չորս ծագերէն համախմբուած սկաուտներ կը մասնակցին անմոռանալի բանակումի մը՝ աննախընթաց յիշատակներով լեցուն։

Գանատայի շրջանային խմբապետութիւնը կազակերպած էր բանակումի նախապատրաստական աշխատանքներու սեմինար մը՝ Քեպէզի եւ Օնթարիոյի նահանգներուն մէջ։ Սոյն սեմինարները տեղի ունեցան Մոնթրէալ՝ մայիս 31–ին, եւ Թորոնթօ՝ յունիս 21–ին, մասնակցութեամբ շրջանի այն անդամներուն, որոնք մաս պիտի կազմեն Համա-ՀՄԸՄ-ական բանակումին։

Շրջանային ընդհանուր խմբապետ Արուշ Պէրպէրեանի, շրջանային խմբապետ Րաֆֆի Դաւիթեանի եւ շրջանային խմբապետուհի Կասիա Կարապետեան Կիւկեանի կողմէ պատրաստուած եւ ներկայացուած աշխատանքները առաւել եւս օգնեցին մասնակիցներուն՝ մօտէն ծանօթանալու բանակումի ընթացքին տեղի ունենալիք գործունէութեանց եւ յանձնախմբերու ծրագիրներուն, ինչպիսին են՝ խարոյկի, մշակութայինի, կայմի, ձեռայինի, նախնական դարմանումի, ինքնազարգացման, ռալիի եւ այլ յանձնախումբերը։

Խմբապետութիւնը, բացատրական դասախօսութեամբ, ներկայացուց բանակումի օրէնքներն ու լայնածաւալ տեղեկութիւն տուաւ կարգ ու կանոնին մասին, որոնք կ'իրագործուին բանակումին ընթացքին։

Մասնակիցները, կարծիքներու փոխանակումով, անդրադարձ կատարեցին նաեւ խարոյկի աշխատանքներուն, որ ամէնէն խանդավառ բաժինն է բանակումին։

ՀՈՒՐԻՆԱ

Վանգուվրի մէջ տեղի ունեցաւ ՀՅԴ ԳԵՄ-ի միջմասնաճիւղային սեմինարը



ՎԱՆ ԳՈՒՎԸՐ – ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան Վանգուվրի «Արշաւիւր Շիրակեան» մասնաճիւղը, իր տեսակին մէջ առաջին անգամ ըլլալով, յուլիս 3–5–ին կազմակերպեց սեմինար մը՝ համախմբելով ընկերներ Մոնթրէալ–Լաւալի «Լեւոն Շանթ–Բեկոր Աշոտ» եւ Թորոնթոյի «Սիմոն Զաւարեան» մասնաճիւղերէն։

Երեք օրերու ընթացքին 30 մասնակից ընկերներ ներկայ գտնուեցան դասախօսութիւններու, մասնակցեցան զրոյցներու եւ պտոյտներու, վայելելով ընկերական ջերմ եւ մտերմիկ մթնոլորտ մը։ Ընկերները հիացած մնացին Վանգուվրի գեղեցիկ բնութեամբ եւ առիթ ունեցան մօտէն ծանօթանալու «Արշաւիւր Շիրակեան» մասնաճիւղի գործունէութեան։

Սեմինարի ընթացքին մասնակիցներուն այցելեցին ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ ընկերուհի Մարալ Քիւլլահան եւ Վանգուվրի «Սիմոն Վրացեան» կոմիտէի անդամ ընկեր Մհեր Զըուշեան, որոնք բարձր գնահատեցին թէ՛ սեմինարի ընթացքը եւ թէ՛ նախաձեռնութիւնը։

Ընկերները սեմինարէն հեռացան բարձր տրամադրութեամբ, նոր խանդավառութեամբ եւ միջմասնաճիւղային կապերը առաւել ամրապնդելու վճռակամութեամբ։

ԼՈՒՈՒ ՔԻՒՎԱՆՆԱՆ

Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները հանդիպեցան նախարար Մելանի Ժոյի հետ

ԳԵՄՊՐԻՃ – Գանատայի Հայ Դատի Շրջանային յանձնախումբի եւ Հարաւարեւմտեան Օնթարիոյի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները չորեքշաբթի, 8 յուլիսին, Գեմպրիճի Հայ կեդրոն կատարած իրենց այցելութեան ընթացքին հանդիպում ունեցան Գանատայի արդիւնաբերութեան նախարար եւ Քեպէզի տնտեսական զարգացման պատասխանատու նախարար Մելանի Ժոյի հետ։

Հանդիպումին ներկայ էր նաեւ Գեմպրիճի նախկին դաշնակցային երեսփոխան Պրայըն Մէյ։

Այցելութիւնը առիթ ընծայեց նախարար Ժոյիին ծանօթացնելու Գեմպրիճի կենսունակ եւ աճող հայ համայնքի գործունէութեան, անոր կառոյցներուն եւ Հարաւարեւմտեան Օնթարիոյի ընկերային, մշակութային եւ տնտեսական կեանքին մէջ հայ համայնքին ունեցած ներդրումին։

Քննարկումներուն ընթացքին արծարծուեցան գանատահայութեան համար շարք մը կարեւոր հարցեր, ներառեալ՝ համայնքային կառոյցներու շարունակական զարգացումն ու դաշնակցային կառավարութեան հետ աւելի սերտ գործակցութիւնը։

Կողմերը քննարկեցին նաեւ Ատրպէյճանի կողմէ Արցախի մէջ իրականացուած ցեղային զտումին հետեւանքները, բռնի տեղահանուած արցախահայութեան իրաւունքներն ու կարիքները, Ատրպէյճանի մէջ հայ գերիներու ազատ արձակման հրամայականը, ինչպէս նաեւ այս հարցերուն նկատմամբ Գանատայի գործօն ներգրաւուածութիւնը պահպանելու անհրաժեշտութիւնը։

Հանդիպումին անդրադարձ կատարուեցաւ նաեւ Գանատա–Հայաստան յարաբերութիւններու զարգացման, տնտեսական կապերու ամրապնդման եւ Հայաստանի հետ Գանատայի դրական ներգրաւուածութեան ընդլայնման կարելիութիւններուն։

Հայութեան հոգին ըստ Մադաքիա Վրդ. Օրմանեանի

ԱՂՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ...

Ըստ Օրմանեան վարդապետի, Հայոց պատմութեան մէջ կան գործեր եւ դէպքեր, որոնք արտասուել կու տան։ Նաեւ՝ անոնց համար «տիրելու եւ ամչնալու տեղի ու–նիմք» (վստահաբար, այսօրուան շարք մը գործերու եւ դէպքերու մասին այ իր երկնայած միտքը նոյնը կ'ըսէ...)։ «Գէշ ու տգեղ» գործեր եւ դէպքեր չեն պակսած Հայոց պատմութեան մէջ։ Սակայն որպէս ջատագով հայութեան հոգիին, աւելցուցած. «միթէ հայե՞րն են միայն, որ այդ–պիսի յանցանաց պարտաւոր գտնուած են երկրիս վրայ, կամ թէ՛ ներկայ ժամանակաց մէջ ալ հայերէ՞ զատ ու–րիշներ չկա՞ն, որ հաւասարապէս նոյն տեսակ ամբաս–տանութեանց կրնան ենթարկուիլ»։ Յետոյ պնդած է, թէ գրեթէ պատմութիւն չկայ, որ իր անուան «անարգանք առթող գործեր չուենեայ, պետութիւն չկայ, որ զղջալու առիթ եղող պատահարներ չողբայ, եւ հիմակ ալ ամէն տեղ եւ ամէն կողմ հակառակութիւնք կը տիրեն եւ ընդ–դիմութիւնք կը թագաւորեն։ Ամէնէն աւելի զօրաւոր եւ իմաստուն եւ խոհմ կարծուած ազգաց մէջ այնպիսի բա–ժանմունք եւ հերձուածք կը տիրեն, որք ինչուան ազգին եւ պետութեան հիմանց հաստատութիւնը կը վտանգեն»։ Արդ, չկայ ազգ որ «կատարեալ առաքինի կրնայ ըլլալ, եւ ոչ ալ՝ բովանդակ մղիլ եւ չար սեպուիլ»։

Աղտեղութիւնները՝ մատուիչներն են ու «անձնա–սէր»ներն են, եւ անոնց գործերն ու գործերէն յառաջա–ցած մուժ դէպքերը, որոնք Հայոց պատմութեան բոլոր ժամանակներուն մէջ երեւցան։ Եւ անձնասիրութեան տարածուելով՝ անմիաբանութիւնը հայութեան հոգիին ուժը մերթ ընդ մերթ փոնցուց։ Յիշած է Արշակունեաց եւ Բագրատունեաց չրջանները, երբ «հայ ձեռքեր» օտա–րին ծառայեցին։ Ակնարկած է նաեւ Բիւզանդական քայ–քայիչ քաղաքականութեան ծառայածներուն։ Բայց այն փտումի օրինակները՝ հայութեան հոգիին խսկութենէն խոտորումներ էին, ուստի՝ «բնական» չէին։ Եթէ «բնա–կան» ըլլային՝ ապա «պէտք էր որ ընդունէինք, թէ հայքս աղէկ ապագայ մը չունիմք», գրած է (այս «չունիմք»ն ալ՝ ակնարկութի՞ւն մը չէ աղտեղութիւններուն իր օր–ուան մէջ եւս երեւումին, եւ ոչ միայն՝ անցեալին վրայ կեցած պնդում...)։ Աղտեղութիւններուն հեղինակնե–րը «ընդհանրութեան մը կերպ»ը չեն մարմնաւորած/չեն

մարմանաւորեր այսինքն՝ հայութեան հոգիին ո՛չ միայն խսկութիւնը, այլ նաեւ ընդհանրական կերպարանքը չեն եղած/չեն։ Անոնք ազգին հանդէպ յանցաւորներ էին/են։

Բայց Հայոց պատմութիւնը ցոյց կու տայ նաեւ թերութիւններ։ Թերութիւններուն մասին առհասարակ մտածած է իբր պակասութիւններ, եւ ոչ՝ յանցանքներ։ Թերութիւններէն շատերը՝ հայոց պատասխանատուու–թեան արդիւնքներ չէին։ Սակաւը՝ էին։ Առհասարակ, չա–տերը թերութիւններուն՝ «հայուն կամքէն անկախ չա–րութիւններ» էին։ Գրած է. «...տասնչորս դարէ ի վեր շա–րունակ կը հարուածեն այդ տարաբաղդ ազգը եւ դժբախտ երկիրը, որ հզօրաց մէջտեղը մնացած եւ անոնց կրից թատրոն ըլլալու դժպիհ բախտն ունեցաւ» (չստ հաւա–նաբար՝ նկատի ունեցած է բիւզանդացիներուն եւ պար–սիկներուն միջեւ Հայաստանի բաժանումէն՝ 387–էն...)։ Դժբախտութիւնները անկարելի դարձուցած էին ազգին կրթութիւնը։ Սակայն ծովացեալ հարուածներու ովկիա–նոսին մէջ՝ հայութիւնը տոկաց, հաստատած է։ Յիրաւի, բազմադարեան տիրապետութիւններու ենթակայ՝ հայը ազդուեցաւ իր վրայ օտար իշխողներուն լուծէն ու խա–ւարէն։ Իշխողները իրենց լուծին ու խաւարին սկսան ըն–տելացնել հայութեան հոգին, եւ իրենց յանցաւոր «սե–փական թերութեանց զգածմունքները» պատուաստե–ցին անոր վրայ։ Հայաստանը որ ինկաւ «ներհակընդէմ գօրութեանց մէջ»՝ տարուբերեցաւ. մէկ կէսը՝ այս, եւ միւս կէսը՝ այն տէրութեան կամ ազգի ծառայութեան ներքեւ ինկաւ, եւ անոր ազդեցութիւններուն ենթարկուեցաւ։ Եւ իշխողները բաժնեցին ու անջատեցին ո՛չ միայն Հայաս–տանը, այլեւ հայութեան հոգին, եւ «տարբեր շահերու նկատողութեամբ՝ տարբեր կարծիքներ յարուցին» հայու–թեան մէջ։ Եւ հայութեան ազգային միաբանութիւնը բա–ժան–բաժան եղաւ։ Այնուհանդերձ՝ այն բաժանումները չկրցան ջնջել անոր էական յատկութիւնները։

Թերութիւններուն առնչութեամբ դիտողութիւն մը արձանագրած է։ Ըստ որուն, թերութիւններ ալ կան, զորս վերապահութեամբ պէտք է նկատի ունենալ։ Այն դիտո–ղութիւնը՝ քննադատութիւն մըն է մեր պատմիչներուն, որոնք իրենց ժամանակակից պարագաներուն խորհրդա–ծութեանց «չստ հետամուտ» չեն եղած, եւ թերութեան դէմքերուն «գաղտնի դիտմանց, սկզբանց, նպատակին,

յատկութեանց եւ նմանօրինակ տեղեկութեանց» վրայ բաւական ուշ չեն դարձուցած։ Հետեւաբար, այս կամ այն պատմական եղելութեան «ըստ արժանւոյն» կշռադա–տումը դժուարացուցած են։ Ասիկա պատճառ է, որ ինք անձնապէս, երբ ուզած է «դժպիհ գործ մը» գննել եւ դա–տել՝ անճրկած է։

Հայոց պատմութեան աղտեղութիւններով եւ թե–րութիւններով հանդերձ, հայութեան հոգիին դրակա–նութեան իր համոզումին մէջ անխախտ մնացած է վար–դապետը։ Եւ հետեւեալ յուսադրիչ պատկերաւոր միտքը արտայայտած է. «Աչուրներուդ առջեւը ըլլայ սեպացեալ ժայռին օրինակը, որ համատարած ովկիանին ալիքներէն կը ծեծուի, կը դիմանայ, եւ չխորտակուիր. միթէ՞ օրէն է ըսել՝ թէ ինչո՞ւ գեղեցկատեսիլ ծաղիկներով զարդար–ուած չէ? Կամ թէ՛ անոր վրայ մանր ծառեր, կանաչ թու–փեր, փոքրիկ արօտներ միայն տեսնալով՝ կրնա՞ն ըսել, թէ ինչո՞ւ բարձրուղի ծառեր, գեղասաղարդ անտառներ եւ ընդարձակ մարգագետիններ չպարունակեր։ Միթէ՞ զարմանալու չենք անոր հաստատութեան եւ մասանց իրարու հետ ամրապինդ միութեան վրայ, որով միայն անկործան մնացած է եւ կը մնայ»։

Բայց յուսադրիչ այս միտքը իր օրուան համար բա–ւարար չէ, խորհած է։ «Աղէկ պտուղ ընդունելու համար» հայութիւնը իր հոգին պէտք է մշակէ եւ խնամէ։ Ամենէն ընտիր սերմնահատիկը անգամ՝ «վտիտ եւ տկար, որդնոտ եւ փտած պտուղներ կու տայ»՝ եթէ անոր հողը չմշակուի, եւ չխնամուի անիկա։

Հայութեան հոգին մշակուելու եւ խնամուելու կամ կրթուելու կը կարօտի, որպէսզի իր աղտեղութիւննե–րը չքանան, ամենատեսակ թերութիւնները պակսին եւ առաւելութիւնները առատանան։ Ներկայ ժամանակաշը–ջանը՝ յեղափոխական է, եւ յեղափոխական ժամանա–կաշրջանը՝ կրթութիւն կը պահանջէ, առաջնահերթաբար։ Այլեւս կարելի չէ թերութիւնները դիտել՝ լոկ իբր պակա–սութիւններ։ Պատասխանատուութիւնը ստիպողական է, անկէ խուսափիլը՝ յանցանք։ Արդ, «մեք հայոյն մտաւո–րական տաղանդը շահեցնեմք», գրած է։

ԳԱՌՆԻԿ ԱԻ. Բ. Գ.
(Ծարունակելի 2)

Վանգուվրի Հայ Կեդրոնի «Սասուն» ճամբարը



ՎԱՆ ԳՈՒՎԸՐ.– Յունիս 29–էն մինչեւ յուլիս 3, Հայ Կեդրոնի Լազարեան սրա–հը Հինգ օր շարունակ լեցուեցաւ մանկական ծիծաղով, երգով, խաղով, պարով եւ նոր գիտելիքներով։ Հայեցի դաստիարակութեան ոգիով կազմակերպուած «Սասուն» ճամբարը այս տարի համախմբեց 5–13 տարեկան 24 երեխաներ, որոնք ամէն օր՝ առա–ւօտեան ժամը 10։00–էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 3։00, մասնակցեցան հարուստ եւ բազմաբնոյթ յայտագիրի մը։

Ճամբարի օրակարգը կը ներառէր Հայոց պատմութիւն, երգ, ասմունք, պար, արուեստ, ձեռարուեստի զանազան աշխատանքներ եւ խաղեր՝ ներդաշնակօրէն միա–խառնելով ուսուցումն ու գոլարճանքը։

Ճամբարի իւրաքանչիւր օրը նուիրուած էր ազգային արժէքի մը եւ հայ նշանա–ւոր դէմքի կամ կերպարի մը՝ Սասունցի Դաւիթ՝ քաջութիւն, Մեսրոպ Մաշտոց՝ հան–ճար,Գանատայի հայ համայնքը՝ ինքնութիւն, Կոմիտաս Վարդապետ՝ մշակոյթ, Սա–նասար եւ Պաղտասար՝ ընկերասիրութիւն։ Օրուան թեմային համապատասխան՝ երե–խաները մասնակցեցան ստեղծագործական աշխատանքներու, խաղերու եւ խմբային գործունէութիւններու, որոնց միջոցով գործնական եւ մատչելի ձեւով ծանօթացան ներկայացուած արժէքներուն ու գաղափարներուն։

Ճամբարի յաջողութիւնը մեծապէս կը պարտինք մեր նուիրեալ կամաւորներուն, որոնք իրենց զբաղ առօրեայէն ժամանակ տրամադրեցին՝ երեխաներուն համար կազմա–կերպուած, ապահով եւ սիրով լեցուն միջավայր մը ստեղծելու նպատակով։

Յատուկ շնորհակալութիւն կը յայտնենք նաեւ մեր մայրերուն, որոնք ամէն օր սիրով պատրաստեցին երեխաներուն ճաշը՝ ճամբարը դարձնելով ոչ միայն ուսուցողա–կան եւ գոլարճալի, այլեւ ջերմ ու ընտանեկան միջավայր մը։

«Սասուն» ճամբարի յաջողութիւնը անկարելի պիտի ըլլար նաեւ առանց ծնող–ներու վստահութեան, շարունակական աջակցութեան եւ քաջալերանքին։ Անոնց նուիրուածութիւնը համայնքին եւ հայեցի դաստիարակութեան նկատմամբ դարձաւ այն ամուր հիմքը, որուն վրայ կը շարունակենք կերտել մեր երեխաներուն ազգային ինքնութիւնն ու ապագան։ Սրտանց շնորհակալ ենք բոլոր ծնողներուն, որոնք իրենց զաւակները վստահեցան մեզի եւ դարձան այս գեղեցիկ նախաձեռնութեան անբաժան մասնակիցները։ «Սասուն» ճամբարը հինգ օրուան փոքրիկ աշխարհ մը դարձաւ, ուր երեխաները ապրեցան իրենց հայկական ինքնութեամբ, ձեռք ձգեցին նոր գիտելիքներ ու հմտութիւններ, երգեցին, պարեցին, ստեղծագործեցին եւ կերտեցին գեղեցիկ յուշեր, որոնք երկար պիտի մնան իրենց մտքերուն ու սրտերուն մէջ։

Մեր համայնքը կը շարունակէ կերտել իր ապագան՝ սկսելով իր փոքրերէն եւ զա–նոնք դաստիարակելով ազգային ամուր արժէքներով ու հայեցի շունչով։

Ինչպէս միշտ, այս տարի եւս «Սասուն» ճամբարը, հաւատարիմ մնալով իր գեղեցիկ աւանդութեան, իր աշխատանքները եզրափակեց «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» նշանաբանով։

ՄԵՂՐԻԿ ՓԱՄՓԱԼԵԱՆ

Յայտ. ... Սկիզբը կարդալ էջ 1

Արդիւնքը եղաւ այն, որ առաջին անգամ ըլլալով վարչական միջամտութեան հե–տեւանքով ՀՀ քաղաքացին զրկուեցաւ իր ընտրելու, իսկ քաղաքական ուժը՝ խորհրդա–րանին մէջ ներկայացուած ըլլալու իրաւունքէն։

Ընտրախախտումներու ծաւալը, ատոնց համակարգուած բնոյթը կը փաստեն ընտրութիւնները սոսկ իշխանութեան պահպանման միջոցի վերածելու վարչախումբի ձգտումներու մասին։ Աւելին՝ ընտրական խախտումներու վերացման պահանջը, քա–ղաքական նպատակայարմարութիւններու պատճառով զանոնք անհետեւանք ձգելը, կը յառաջացնեն պետական կառոյցներու կենսունակութեան եւ սահմանադրական կարգի պահպանման հետ կապուած հիմնաւոր կասկածներ։

Այլեւս աներկբայ է, որ խորհրդարանական այս մեծամասնութիւնը ձեւաւորուած է ոչ թէ ժողովրդավարական ընտրութիւններու, այլ բացառապէս սահմանադրական դատարանի կողմնակալ որոշման եւ վարչական մեքենայութիւններով իրականացուած մանդատներու բաշխման իբրեւ արդիւնք։ Այս ընտրութիւններուն ընթացքին էական գործօն էին նաեւ արտաքին ուժային կեդրոններու եւ զանազան դերակատարներու բացայայտ միջամտութիւններն ու ազդեցութիւնները, ինչ որ լուրջ հարուած էր Հայաս–տանի ինքնիշխանութեան ու գերիշխանութեան։

Այգուհանդերձ, հակառակ վերը նշուած հանգամանքներուն, բոլոր դժուարու–թիւններուն, սահմանափակումներուն եւ խոչընդոտներուն՝ հաւաքական ընդդիմու–թիւնը կրցաւ պատկառելի քանակով ընտրաքուէ ստանալ։ «Պաշտօնապէս» արձանագը–ուած արդիւնքները թէեւ գործող իշխանութիւններուն փաստացի հնարաւորութիւն կու տան վերարտադրուելու, սակայն ակնյայտ է, որ իշխող վարչախումբը անկման ընթաց–քի մէջ է եւ կորսնցուցած է իր լեգիտիմութիւնը։ Ասոր վկայութիւններէն են նաեւ նոր թափ ստացած յետընտրական քաղաքական հետապնդումներն ու բռնաճշդումները։

Քաղաքական ճգնաժամը, ընտրութիւններուն իբրեւ արդիւնք, ոչ միայն չէ յաղ–թահարուած, այլեւ իշխող վարչախումբի քայլերուն իբրեւ հետեւանք, աւելի խորացած է՝ ձեռք բերելով վտանգաւոր ներազգային եւ աշխարհաքաղաքական երանգներ։ Ամէն գնով վերաբրտադրուելու իշխանութիւններու մոլուցքը հարուածի տակ դրած է հանրա–յին համերաշխութիւնը, ժողովրդավարական արժէքները, կայունութիւնը եւ պետու–թեան կենսունակութիւնը։

Գործող վարչախումբը շարունակ կը թիրախաւորէ Անկախութեան հռչակագի–րը, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, արցախեան շարժումը, հայկական ինքնութեան հիմքերը, այն ամէնը՝ ինչ հանդիսացած է համահայկական միասնութեան շաղախը։ Ստեղծուած պայմաններուն մէջ, նոր իրողութիւններն ու հանգամանքները հաշուի առնելով, հարկ է շարունակել քաղաքական պայքարը նոր մարտավարութեամբ, նոր թափով եւ ուժգնութեամբ։

Գլխաւոր խնդիրը իշխող վարչախումբի՝ Հայաստանի թրքացման միտուած կոր–ծանարար եւ աղէտաբեր քաղաքականութեան կանխումն է, եւ այս առումով խիստ կա–րեւոր է բոլոր առողջ, ազգային ուժերու համակարգուած ու համադրուած աշխատանքը եւ հանրային լայն համախմբումը։

Հետեւողական եւ աննահանջ պայքարը բոլոր ճակատներու վրայ յաջողութեան հասնելու միակ ճանապարհն է։

Հայկական ինքնութեան պահպանումը, ազգային ու արժանապատիւ պետութիւն ունենալու հրամայականը պէտք է դառնան համահայկական թիւ մէկ օրակարգ։

ՀՅԴ ԲԻՒՐՕ, 09 Յուլիս 2026

Canada freezes new parent and grandparent sponsorship applications for permanent residence

OTTAWA — The federal government has indefinitely paused new applications under Canada’s Parents and Grandparents Program, leaving Canadian citizens and permanent residents without a current pathway to sponsor additional parents or grandparents for permanent residence.

Immigration, Refugees and Citizenship Canada announced on July 15 that it will neither accept new “interest to sponsor” forms nor issue invitations to potential sponsors until further notice. The department will continue processing applications already in its system and plans to admit up to 15,000 people through the program in 2026.

Approximately 50,900 applications remain in the inventory, including 40,400 from applicants intending to settle outside Quebec and 10,500 destined for Quebec. Ottawa has set annual admission targets of 15,000 parents and grandparents for each year from 2026 through 2028.

The program has not accepted new expressions of in-

terest since 2020, when more than 203,000 potential sponsors entered the lottery. Invitations issued between 2020 and 2025 were drawn from that same pool, meaning families who missed the 2020 intake have had no opportunity to join the process.

The government says the pause is intended to reduce backlogs and make processing more predictable. However, with no date provided for re-opening the program, many families may remain excluded from permanent reunification for the foreseeable future.

Ottawa is directing affected families toward the super visa, which allows eligible parents and grandparents to remain in Canada for up to five years per visit and provides multiple entry privileges for as long as 10 years. Unlike permanent residence, however, the super visa is temporary and requires applicants to obtain health insurance, meet entry requirements and demonstrate that they will leave Canada when their authorized stay ends.

Trump Ballroom donor to lead \$200 million TRIPP+ fund

WASHINGTON — Konstantin Sokolov, a Russian-born private equity investor and a donor to President Donald Trump’s White House ballroom project, has been named as chairman of the TRIPP+ Fund, which is to oversee projects related to the eponymous Trump Route for International Peace and Prosperity.

The State Department confirmed Sokolov’s appointment, saying that he would be overseeing more the enterprise fund worth more than \$200 million. The Guardian newspaper reported.

Sokolov was one of 36 donors, including 21 corporations and 15 individuals and family foundations, who Donald Trump said contributed over \$350 million to his ballroom project.

The TRIPP+ Fund is part of the Trump Route — the 27-mile stretch of road running through Armenia’s Syunik Province — and was agreed to by Prime Minister Nikol Pashinyan and President Ilham Aliyev of Azerbaijan when they met with Trump at the White House last August.

A state department spokesperson said the \$201m fund is authorized to make loans, equity investments and grants promoting strategic private sector development in the south Caucasus and central Asia, including in Armenia, Azerbaijan, Georgia,

Kazakhstan, Kyrgyzstan, Tajikistan, Turkmenistan and Uzbekistan, The Guardian reported.

Vice-President JD Vance, during a visit to Yerevan, in February, described the TRIPP+ fund as part of a “historic transformation” that would “open up a whole new world of trade, transit and energy flows.”

When Secretary of State Marco Rubio and Foreign Minister Ararat Mirzoyan signed the TRIPP economic and security agreement in late May, Mirzoyan told the press they were “laying groundwork for the sort of economic engagement that allows Armenians to make money and find prosperity and Americans to do the same.”

Sokolov, who is listed as a founder and chairman of the TRIPP+ Fund is a major shareholder in Armenia’s largest telecommunications company, Viva Armenia.

According to The Guardian report, the Trump administration has already taken unprecedented steps to deepen its ties with Armenia since the White House meeting last August, committing \$9 billion to boost Armenia’s nuclear energy sector and selling \$11 million of US-made reconnaissance drones to its government, marking America’s first-ever military technology sale there.

ARF Bureau issues statement on June 7 parliamentary elections

The parliamentary elections held in Armenia on June 7 will remain in our modern history as elections conducted under unprecedented conditions of state terror.

Throughout the electoral process, the ruling regime acted without restraint, employing every means at its disposal. It made extensive use of administrative resources by mobilizing state and municipal institutions. The full arsenal of propaganda and administrative pressure was deployed to limit political competition and influence the free expression of voters’ will. The government’s use of hate speech and its actions further deepened divisions and polarization within Armenian society.

As a result, for the first time, administrative interference deprived citizens of the Republic of Armenia of their right to vote, while denying a political force its rightful representation in parliament.

The scale and systematic nature of the electoral violations demonstrate the regime’s determination to reduce elections to nothing more than a mechanism for preserving its grip on power.

Furthermore, the failure to remedy electoral violations and the decision to leave them inconsequential for political expediency raise serious doubts about the viability of state institutions and the preservation of constitutional order.

It is now beyond dispute that the current parliamentary majority was formed not through democratic elections, but solely as a result of a biased ruling by the Constitutional Court and the allocation of parliamentary mandates through administrative manipulation.

Another significant factor in these elections was the overt interference and influence of external centers of power and various foreign actors, dealing a serious blow to Armenia’s sovereignty and agency.

Nevertheless, despite the above circumstances, obstacles, restrictions, and pressures,

the united opposition secured a substantial share of the vote, thereby demonstrating the current regime’s loss of legitimacy. Although the “official” results provide the authorities with the practical means to reproduce themselves in power, it is evident that the ruling regime is in decline and has lost its legitimacy. The renewed wave of post-election political persecution and repression further evidences this.

Rather than resolving the country’s political crisis, the elections have deepened it. The actions of the ruling regime have intensified the crisis, giving it dangerous domestic and geopolitical dimensions. The authorities’ obsession with retaining power at any cost has undermined national unity, democratic values, stability, and the very viability of the Armenian state.

The current regime continues to target the Declaration of Independence, the Armenian Apostolic Holy Church, the Artsakh Movement, and the very foundations of Armenian identity, everything that has served as the cornerstone of pan-Armenian unity.

Under these circumstances, and in light of the new realities, it is imperative to continue the political struggle with a renewed strategy, greater determination, and increased intensity.

The primary objective is to prevent the ruling regime’s destructive and disastrous policies aimed at the Turkification of Armenia. In this regard, coordinated action among all healthy national forces and broad public unity are of critical importance.

Persistent and unwavering struggle on every front is the only path to success.

Preserving Armenian identity and the imperative of maintaining a national and dignified state must become the foremost priority on the pan-Armenian agenda.

ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION
BUREAU
July 9, 2026

Statue of Garo Sassouni, revolutionary leader, unveiled in Gyumri

Gyumri — A statue of storied Armenian revolutionary leader Garo Sassouni was unveiled in Gyumri on July 17 as a public testament to his contributions to the Armenian Liberation Movement.

In a special ceremony attended by community members and activists, the statue, which stands at the intersection of Proshyan and Karekin Njdeh streets in Gyumri, was unveiled.

Garo Sassouni was a singularly unique public and political figure — a national hero. A lawyer, and historian, he was elected as a member of the Parliament of the First Republic in 1919 and later was appointed as governor of Alexandrapol — present-day Shirak Province — in 1920.

He was one of the founders and leaders of the Armenian Liberation Movement that sought salvation for the Armenian people during the Genocide. He participated in the crucial battle of Dashtadem fortress, which ultimately resulted in victory at Sardarabad.

Having been appointed Governor of Shirak, he began a merciless fight against corruption. As Inga Avagyan, Director of the “Gumairi Historical and Cultural Reserve-Museum,” reported, he put an end to corruption in a short period of time, equally punishing both bribe



givers and bribe takers.

The bronze statue that stands at almost eight feet was the work of sculptor Missak Melkonyan.

During the ceremony Friday, Melkonyan explained the statue has three important symbols: the pipe is a symbol of thought and contemplation; the necklace is a symbol of freedom, and the outstretched index finger encapsulates Sassouni’s leadership.

The statue was made possible through the efforts of two benefactors—Ashot Nersisyan, the president of the “Zoravar Sebouh” civic organization, and Ivan Aldhaldjian.

In his remarks, Artashes Shahbazyan, a member of Hamazkayin Central Executive, said that the unveiling event should have much more resonance in Armenia, because Garo

Sassouni was a person of stature and a National Hero.

Sassouni led the Armenian Liberation Movement for more than 20 years, participated in state-building efforts, battles, and dedicated his life in the Diaspora to the service of Armenians. Shahbazyan pointed out that Garo Sassouni’s mother, Anna, was a very prominent person in the Sassoun Province in Western Armenia and was, herself, a well-known fedayee.

Also present at the event was one of Garo Sassouni’s students, ARF leader Dikran Jinbashian, who considered himself lucky as one of the last generation of students to have been taught by Garo Sassouni, emphasizing that he owed the great national hero his education in Armenian literature, history and the pursuit of the Armenian Cause.

500,000 ALBERTA FAMILIES TO RECEIVE INCREASED CANADA CHILD BENEFIT PAYMENTS

In a recent press briefing made by Eleanor Olszewski, Minister of Emergency Management and Community Resilience and Minister responsible for Prairies Economic Development Canada, and Corey Hogan, Parliamentary Secretary to the Minister of Energy and Natural Resources, on behalf of Anna Gainey, Secretary of State (Children and Youth), it was announced that the Government of Canada will be increasing support for the Canada Child Benefit (CCB). This program is designed to provide tax-free monthly payment to parents to help cover the rising cost in childcare and to provide children with an equal opportunity for a strong start in life.

Minister Olszewski said: “Raising a family comes with real costs, and the Canada Child Benefit helps nearly half a million Alberta families put more money back into their household budgets each month. Through the Canada Child Benefit, we are investing more than \$4 billion each year in Albertan families. By increasing the benefit to keep pace with inflation, we’re helping parents manage everyday expenses, support their children, and build a stronger future right here in Alberta.”

“Nearly half a million Alberta families receive support through the Canada Child Benefit every year. This investment helps parents manage household expenses, strengthens communities and gives children the opportunity to reach their full potential,” said Parliamentary Secretary Corey Hogan.

\$607.4 MILLION INVESTMENT IN THE NATIONAL ACTION PLAN TO END GENDER-BASED VIOLENCE

At the 44th annual meeting of the Federal-Provincial-Territorial (FPT) Forum of Ministers Responsible for the Status of Women, hosted in Moncton, New Brunswick, Rechie Valdez, Minister of Women and Gender Equality and Secretary of State (Small Business and Tourism), and Lyne Chantal Boudreau, Minister responsible for Women and Gender Equity for the Government of New Brunswick, as well as Ginette Petitpas Taylor, MP for Moncton—Dieppe, a \$607.4-million investment was declared, that will be provided over a 4 year period, for the National Action Plan to End Gender-based Violence.

“Every person deserves to live free from violence. That’s why we’re renewing bilateral agreements with provinces and territories to ensure victims, survivors, and their families can continue to access the services they rely on every day. Together, we’re strengthening supports, helping communities respond, and building a safer Canada for everyone,” said Minister Valdez.

Minister Boudreau said: “Together, our governments are committed to making the invisible visible, to ensuring that every person, family, and community has access to essential resources so that we can live in a country free from gender-based violence. New Brunswick, in collaboration with its Indigenous, federal, provincial, and territorial partners, is proud to reaffirm its commitment to creating a safer and more equitable society for all Canadians.”

GOVERNMENT OF CANADA AND GOVERNMENT OF QUEBEC INVEST IN FISH AND SEAFOOD SECTOR

In a recent press briefing made by Joanne Thompson, Minister of Fisheries, —alongside Donald Martel, Quebec Minister of Agriculture, Fisheries and Food, — announced the renewal of the Quebec Fisheries Fund (QFF), with a total budget of \$50 million that will be funded over a five year period. This fund is designed to provide support for Canada and Quebec’s fish and seafood sector to help the industry evolve and adapt to the ever-changing market, adopt new technologies and remain competitive in the global markets.

“Renewing the Quebec Fisheries Fund gives people in the sector the tools to grow and reach new markets. It helps businesses sell their products in more places, and it backs the new ideas and stronger infrastructure that get them there. By bringing harvesters and scientists together, the fund also helps those same businesses adapt and find new opportunities. That adds up to a stronger future for the people who harvest and process in Quebec, and for the communities that depend on the fishery,” said Minister Thompson.

For his part, Minister Martel said: “The industry had been waiting for the renewal of the Quebec Fisheries Fund, and I am very pleased that our government is responding to this call. Fisheries and aquaculture play a vital role in the economy and development of our coastal regions. This agreement will provide businesses with the predictability they need to carry out their projects, improve their productivity, and develop new markets. It is concrete support that will foster the dynamic of our maritime communities, while helping to strengthen our food self-sufficiency.”

ISHKHAN GHAZARIAN
Local Journalism Initiative Reporter

What happened to Israel’s recognition of the Armenian Genocide? fact vs. rumour

BY HARUT SASSOUNIAN

On a daily basis, we are all inundated with so much misinformation that it is becoming almost impossible to distinguish fact from fiction. For those of us in the news business, the challenge is even greater. Whereas regular people can pass on baseless rumours to their immediate circle, the mass media bears a much greater responsibility because it risks spreading false information to thousands or even millions of people, unless it first verifies the facts.

A recent example of a story that evolved from fact into rumour was the Israeli Foreign Minister’s announcement last month that his government would recognize the Armenian Genocide. The news spread like wildfire throughout the international media. There were endless commentaries and analyses about why Israel decided to recognize the Armenian Genocide after decades of refusing to do so.

Shortly after the Israeli Foreign Minister’s announcement, the government (Cabinet) unanimously approved the recognition of the Armenian Genocide and decided to forward the measure to the Knesset (Parliament) for final approval.

Not surprisingly, the Turkish government furiously denounced the decision of Israel’s Cabinet, accusing it of trying to divert the world’s attention from the atrocities being committed in Gaza. Ironically, this accusation came from the Turkish government, which has gone to extraordinary lengths for over a century to cover up the genocides of Armenians, Assyrians, and Greeks.

Siding with Turkey’s denial of the Armenian Genocide was the government of Azerbaijan which has itself committed several mass murders against Armenians. As the saying goes, “birds of a feather flock together.” Azerbaijani officials expressed their objection by reminding Israel’s leaders of the billions of dollars’ worth of Israeli weapons they had purchased and that, in return, had sold to Israel a large share of its imported oil. Neither Azerbaijan nor its ally Turkey, which serves as the conduit for the Azeri oil exports to Israel, mentions its own role in supplying the

fuel for Israel’s war machine.

The objections from Azerbaijan and Turkey triggered the false rumor that the Israeli government had abandoned the Knesset’s consideration of the Armenian Genocide, even though there was absolutely no official confirmation from Israel.

The fact is that the Knesset’s agenda was packed with several major issues during the last few days of its session, leaving no time to consider the Armenian Genocide. The Knesset went into recess last Friday until October, when new elections are scheduled to take place. It remains to be seen whether the next Knesset will take up this issue.

Even though Israel’s decision to recognize the Armenian Genocide was not intended to please the Armenian government, it must have been disappointing to hear the lackadaisical reaction of Prime Minister Nikol Pashinyan.

Those who have followed Pashinyan’s previous shameful statements in recent years questioning the facts of the Armenian Genocide should not have been surprised to see him disregard Israel’s Cabinet decision. “We see no need to respond because we believe that refraining from entering into the issue of the weaponization of the Armenian Genocide is in the interests of the Republic of Armenia,” Pashinyan stated.

However, when the US government recognized the Armenian Genocide, Pashinyan did not

consider it to be “weaponization.”

On the contrary, he was highly enthusiastic about the US Senate’s acknowledgement of the Armenian Genocide in 2019. He wrote on X (then Twitter): “US Senate Resolution 150 is a victory of justice and truth. On behalf of the Armenian people worldwide, I express our profound appreciation to the Senate for this landmark legislation. This is a tribute to the memory of 1.5 million victims of the first Genocide of the 20th century and a bold step in promotion of the prevention agenda. #NeverAgain.”

Pashinyan then added: “On behalf of the Armenian people, I want to thank all members of the US Senate [and] ... the House of Representatives.... We must address words of appreciation to the Armenians of the United States, to all those organizations and individuals who contributed to this important and historic decision.” It is noteworthy that Pashinyan expressed his gratitude to the Armenian-American community for this recognition, in stark contrast to his subsequent anti-Diaspora statements.

In addition to reversing his position on the recognition of the Armenian Genocide, Pashinyan has, in recent years, contradicted himself on dozens of other issues. Most notably, in 2019, speaking in Stepanakert before thousands of cheering Artsakh Armenians, he declared: “Artsakh is Armenia. Period.” After the 2020 war, however, he took the exact opposite position by acknowledging that Artsakh is part of Azerbaijan.

Ascenseur  Elevator
Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4
RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.**

Eddie, Pedro, Joyce Oughourlian



ADONIS

Marché méditerranéen



SAUVÉ - DDO - VILLE DE QUÉBEC - LAVAL OUEST - VERTU - BROSSARD - SAINTE-CATHERINE - ANJOU - LAVAL EST - GRIFFINTOWN - GATINEAU
OTTAWA - MISSISSAUGA - SCARBOROUGH - DUNDAS - LONDON



CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE
& PHARMACY

PHARMACISTS

SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:


Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
Toronto, Ontario M1R 1V2 Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048



#SHK2026

GROUPE
GABRIEL



ELIE
BERBERIAN

Ուրբաթ
Vendredi
Friday
14
Août
Oqnuunnu/August



